

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ**

**КУЛЬТУРА ДРЕВНЕЙ  
АРМЕНИИ  
XIV**

**Материалы  
республиканской научной сессии**

**ЕРЕВАН  
ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА  
2008**

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

## XIV

Նյութեր

հանրապետական գիտական նստաշրջանի

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2008

ՀՏԴ 06:008(479.25)

ԳՄԴ 71(27)

Հ 590

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝

Պ.Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա.Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, Ռ.Ս. ԲԱԴԱԼՅԱՆ

Հ 590 Հին Հայաստանի մշակույթը. – XIV պրակ. Նյութեր  
հանրապետական գիտական նստաշրջանի. – Եր.,  
«Գիտություն» հրատ., 2008, – 350 էջ:

Գրքում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստի-  
տուտի 2005-2006 թվականների հնագիտական դաշտային հետազոտություն-  
ների գիտական հաշվետվությունները, որոնք նվիրված են հնագիտական  
տարբեր հիմնախնդիրների և սկզբնաղբյուրների լուսաբանմանը:

Նախատեսվում է հնագետների, ազգագրագետների, հայոց պատմության և  
մշակույթի հարցերով զբաղվողների, բարձրագույն ուսումնական հաստատու-  
թյունների ուսանողների համար:

ԳՄԴ 71(27)

ISBN 978-5-8080-0734-5

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2008

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008

## ՇԱՂԱԹ I ՄԻՋԻՆԲՐՈՆՁԵՂԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱԲՈՒՄԱԲԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՆԱԼԻՋԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

«Որոտան» հայ – ամերիկյան համատեղ հնագիտական ծրագրի շրջանակներում ուսումնասիրվում է Շաղաթ I բազմաշերտ հուշարձանախմբի սարահարթային մասում գտնվող միջինբրոնզեդարյան բնակավայրը (պեղավայր NPG 16)<sup>1</sup>: Որոտանի միջին հուսանքի տարածքում՝ «Անգեղակոթի հովտում», տեղակայված այդ բնակավայրում հնաբուսաբանական նյութերի առկայությունը որոշելու համար 2006 թ. վերցվել և հետազոտվել են 3 հողանմուշներ (աղ. I):

Բուսական մնացորդները, որոնք ներկայացված են ածխացած փայտի կտորներով և պտղասերմնաբանական նյութով, առանձնացվել են ֆլոտացիայի և լվացման մեթոդներով:

Ըստ պտղասերմնաբանական նյութի (549 միավոր, աղ. I, II)՝ որոշվել են 9 կարգաբանական միավորների պատկանող բույսեր՝ ցորեն (*Triticum cf. Aestivum/turgidum* և *Triticum sp.*), անորոշ հացազգի (*Gramineae gen. sp.*), որոն (*Lolium sp.*), մակարդախոտ (*Galium sp.*), դաշտային կաքավկրկուտ (*Buglossoides arvensis*), մուգգորշ բորոտիկ (*Nonea pulla*), անորոշ գաղտրիկազգի (*Boraginaceae gen. sp.*), նեսլիա (*Neslia sp.*) և անորոշ բոշխազգի (*Cyperaceae gen. sp.*): Գտածոներն ունեն լավ կամ բավարար պահպանվածություն:

Պտղասերմնաբանական նյութի խտությունը Δ39 և 41 մմուշում (4 լ), որը վերցվել է պատահականության սկզբունքով (Jones, 1991) և կարող է արտահայտել միջին տվյալներ, բավականին բարձր է՝ մոտ 5 միավոր 1 լիտր հողում (աղ. I):

Պեղավայրի առաջին «հատակի» վրայից գտնված ձեռածեփ գավաթի (անոթ #1, Δ20, աղ. I; Ս.Ս.Մելքոնյան, նշվ. աշխ., աղ. II, 18) հողային լիցքում հայտնաբերվել են ընդամենը բոշխազգու 1 ածխացած ընկուզիկ և փայտի ածխացած մի քանի մմ չափսերով բեկորներ, որոնք անոթի մեջ են հայտնվել պատահականորեն՝ շրջակայքի հողի հետ:

Ցորենի մշակովի տեսակի ածխացած հատիկներից բացի, մշակաբույսերի առկայության անուղղակի ապացույցներ են նույն հատակի վրա գտնված մոլախոտերի սերմերը: Դրանք ընտրողական պահպանման արդյունքում հնագիտական շերտերում ավելի լավ են գոյատևում (աղ. II): Հացազգիների օգտագործման մասին են վկայում նաև հացահատիկների մշակության հետ

<sup>1</sup> Շաղաթի միջինբրոնզեդարյան բնակատեղիի պեղումների մասին՝ տես տվյալ ժողովածուում Ս. Ա. Մելքոնյանի հոդվածը:

առնչվող գործիքները՝ աղորիքները, տրորիչները, պարզունակ սանդերը և այլն:

Շաղաթ I հնավայրից բացի, Սյունիքում հնաբուսաբանական մնացորդներ հայտնի են նաև քննվող հուշարձանի հարևանությամբ գտնվող Գողեծորի էնեոլիթյան բնակատեղիում: Շաղաթ I-ի համար բերվող բոլոր կարգաբանական միավորները, բացառությամբ բորոտիկի, նեսլիայի և անորոշ բոշխագու, առկա են նաև Գողեծորի հնաբուսաբանական հավաքածուում (Hovsepyan, 2006):

Հայաստանում միջին բրոնզեդարյան ժամանակաշրջանի հնաբուսաբանական գտածոներ հայտնի են նաև Ներքին Նավերի #3, #4 դամբարանների անոթներից և Այգեվանի հնավայրի միջինբրոնզեդարյան շերտերից: Ներքին Նավերում մշակաբույսերից դեռևս հայտնաբերվել է միայն գարի (#3 դամբարան), իսկ Այգեվանից՝ գարի և ցորեն (*Āšar äēšyř*, 1976): Կաքավկրուտ, բորոտիկ և մակարդախոտ հայտնաբերվել են նաև Ներքին Նավերից:

Ամփոփ եզրակացությունների և համեմատական վերլուծությունների համար բնականաբար անհրաժեշտ է գտածոների համեմատաբար մեծ քանակություն և կարգաբանական բազմազանություն, որը հնարավոր է ստանալ հնավայրի մշակութային շերտերի հետագա ուսումնասիրությունների արդյունքում: Այդուհանդերձ, առկա նյութերը թույլ են տալիս ենթադրելու Շաղաթ I միջինբրոնզեդարյան բնակչության՝ հացահատիկների մշակությամբ զբաղվելու, ինչպես նաև սեփական երկրագործական արտադրանքի վերամշակման մասին:

## ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ


1. **Гандилян П.А. 1976.** Некоторые данные об эволюции культурной пшеницы и ячменя по археологическим материалам. Тезисы докл. 3-го съезда Арм. общ. генетиков и селекционеров им. Вавилова Н.И., Ереван, с. 25-26.

2. **Hovsepyan R.A. 2006.** Eneolithic plants from South-East Armenia (Godedzor settlement). *Plant, fungal and habitats diversity investigation and conservation*. IV Balkan Botanical Congress, Sofia, Bulgaria, pp. 176.

3. **Jones M.K. 1991.** Sampling in palaeoethnobotany. *Progress in Old World Palaeoethnobotany*. Van Zeist, Wasylkowa & Behre (eds), Balkema, Rotterdam, Brookfield, pp. 53-62.

Գտածոյի տեսակը	Կարգաբանական պատկանելությունը		Չողանմուշը ըստ տեղավայրի		
			VP06 E; Site 1; NPG 16-1,2		
	Տեսակը	Ընտանիքը	Δ39 և 41	Δ41	Δ20, անոթ #1
Ածխացած հատիկներ և հատիկների բեկորներ	<i>Triticum cf. aestivum/turgidum</i>	Poaceae	3	0	0
	<i>Triticum sp.</i>		3	0	0
	<i>Lolium sp.</i>		2	0	0
	<i>Gramineae gen. sp.</i>		9	0	0
Ածխացած կես մերիկարպիում	<i>Galium sp.</i>	Rubiaceae	1	0	0
Քարացած ընկուզիկներ	<i>Buglossoides arvensis</i>	Boraginaceae	1	66	0
	<i>Nonea pulla</i>		0	46	0
	<i>Boraginaceae gen. sp.</i>		0	1	0
Կիսաքարացած պատիճակներ	<i>Neslia sp.</i>	Brassicaceae	0	2	0
Ածխացած ընկուզիկ	<i>Cyperaceae gen. sp.</i>	Cyperaceae	0	0	1
<b>Ընդամենը</b>			<b>19</b>	<b>529</b>	<b>1</b>

Աղյուսակ I. Շաղաթի #1 հնավայրի միջինբրոնզեդարյան շերտերից հայտնաբերված հնաբուսաբանական գտածոները (2006թ.):



1, 2 - ցորենի ածխացած հատիկներ; 3 - որմնի ածխացած հատիկներ;  
 4 - մակարդախոտի ածխացած կեռ մերիկարափում; 5-6 - մետլիայի պատիճակներ;  
 7-9 - դաշտային կաքավկրկուտի հանքայնացած էրեմաներ; 10-14 - բորոտիկի  
 հանքայնացած ընկուզիկներ: v - որովայնային մաս, l - կողքային մաս,  
 d - թիկնային մաս: 1-4, 7 - Δ39 և 41; 5-6, 8-14 - Δ41:

Արյուսակ II